ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անուն, Ազգանուն	Ռոբերտ Մակարյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Ֆրանսիայի Հանրապետություն (Լիոն) 2017 թվականի հուլիսի 17-19-ը
4.	Հրավիրող կողմը	Օքսֆամ կազմակերպություն
5.	Գործուղման նպատակը, աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող պարենային անվտանգության ծրագրի շրջանակներում Օքսֆամ կազմակերպության կազմակերպած ուսումնական այցին
6.	Քննարկված թեմաները	Ծանոթություն Լիոնում գործող սննդամթերքի անվտանգության ոլորտում մասնագիտացած կառույցների գործունեությանը, մասնավորապես սննդամթերքի անվտանգության ռիսկերի մշտադիտարկման և գնահատման համակարգին և մեխանիզմներին:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված քննարկված հարցերը	- հանդիպում ֆրանսիական Toupargel սառնարանային տնտեսությունների և լոգիստիկ կազմակերպության ղեկավարության հետ, ներկայացվել են կազմակերպության արտադրական հզորությունները և կիրառվող տեխնոլոգիաները, - հանդիպում Beaujolais գինեգործական և խաղողագործական կազմակերպության ղեկավարության հետ, - հանդիպում CPME ֆրանսիական ՓՄՁ կազմակերպությունում, տեղեկացվեց, որ 2017 թվականի հոկտեմբերի 2-6-ը նախատեսվում է կազմակերպության ղեկավարի և ներկայացուցիչների այց Հայաստան (պատվիրակությունը բաղկացած կլինի 20 հոգուց, որոնցից 7-8 հոգին՝ գյուղատնտեսության և սպասարկման ոլորտից)՝ Հայաստանի բիզնեսի հետ գործընկերային հարաբերությունների հաստատման նպատակով:

		- հանդիպում Pierre Martinet սննդի արդյունաբերության ձեռնարկությունում, - հանդիպում Լիոնի գյուղատնտեսական պալատի ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվեցին հնարավոր համագործակցության հարցեր:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	- Ֆրանսիական Toupargel սառնարանային տնտեսությունների և լոգիստիկ կազմակերպության ղեկավարության հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց քննարկել հետագայում ՀՀ-ից վերամշակված պտուղ-բանջարեղենի իրացման հնարավորությունները: - Beaujolais գինեգործական և խաղողագործական կազմակերպության ղեկավարության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց քննարկել Հայաստանի խաողագործության և գինեգործության հիմնադրամին, ինչպես նաև գինեգործական ընկերություններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու հնարավորությունը:
9.	Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևերը, ժամկետները, ակնկալվող արդյունքը	-
10.	Գործուղվողներ	Ռոբերտ Մակարյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
11.	Ստորագրություն, ամիս, ամսաթիվ, տարեթիվ	24.07.2017թ.